

Թաղման օրուան այդ ճաշը, այդքան հին, եւ իւր բոլոր հանգամանօք վաղուց ծանօթ Հոովմայեցւոց, Ետրուրացւոց եւ այլոց եւս (Գար. Բ, 1385), ըստ ինքեան բնական պէտք մ'էր սգաւորաց հետ երկար ժամերով ողբացողաց համար: Միայն թէ հանդիսական ձեւ առած էր իբրեւ հոգեհանգիստ մը, եւ ասով իսկ արժանի ուշադրութեան:

9. — Խաչի ուրբար: — Ընտանեկան օր մ'էր այս մեռելոց յիշատակին, յատուկ կանանց միայն, ուր հանգուցելոյն ազգականուհիք ճաշի կը հրաւիրէին իրենց սեռակիցները: Յովհ. Եզնկացին է զայս յիշողն հետագայ խօսքերով. «Սուրբ Խաչի ուրբաթուն ծախս հանեն յանուն մեռելոյն, եւ ժողովս կանանց առնեն», որով յայտնի է՝ թէ ժողովողներն ալ կանայք են, «ուտեն եւ ըմպեն». որուն կը հակառակի ինքն իբր աւելորդ ծախուց դուռ (Վս. սգ.): Թէ վարդապետէս ո՛րքան հին է այս սովորոյթը, յայտնի չէ. բայց կարծեմ թէ իւր ծագումն հետեւանքն է այն պարագային, որով կանայք չէին կարող մասնակցիլ հասարակաց կոչունքներու (աստ, 141), բաց ի չքաւոր այրիներէն՝ որ ըսինք թէ աղքատաց հետ միասին կրնային ազապին երթալ (աստ, 322, 357):